ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լուկաշին , Հ. Ավետիսյանի 38 , g.lukashin@mail.ru

<< 04 >> դեկտեմբերի 2019թ.

N 08 ՆԻՍՏԻ
Թիվ 40

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 04 – ի հերթական թիվ 08 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ալեքսանյան Ալվարդ | ------------ | ----------- | ------------- |
| Թովմասյան Անդրանիկ | ------------ | ----------- | ------------- |
| Հովհաննիսյան Արամայիս | ------------ | ----------- | ------------- |
| Հովսեփյան Սուրեն | ------------ | ----------- | ------------- |
| Մուրադյան Սուրեն | ------------ | ----------- | ------------- |
| Մեսրոպյան Նորիկ | ------------ | ----------- | ------------- |
| Մկրտումյան Արթուր | ------------ | ----------- | ------------- |

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԿՐՏՉՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 04–ի, Լուկաշին համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<04>>-Ի
N 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՆՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

40. ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04 –Ի ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/

41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/

42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լուկաշին , Հ. Ավետիսյանի 38 , g.lukashin@mail.ru


<< 04 >> դեկտեմբերի 2019թ. N 08 ՆԻՍՏԻ
Թիվ 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և « Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի Լուկաշին համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ալեքսանյան Ալվարդ | | ---------- | ------------ |
| Թովմասյան Անդրանիկ | ------------ | ---------- | ------------ |
| Հովհաննիսյան Արամայիս | ------------ | ---------- | - ------------ |
| Հովսեփյան Սուրեն | ------------ | ---------- | ------------ |
| Մուրադյան Սուրեն | ------------ | ---------- | ------------ |
| Մեսրոպյան Նորիկ | ------------ | ---------- | ------------ |

Միքայելյան Արթուր

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՄԿՐՏՉՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 04–ի, Լուկաշին համայնք

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<04>>-Ի
N 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.
**2)** համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի)
թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
**ա.** չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ,
**բ.** բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ
շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով սահմանված դրույքաչափից,
կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և
դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական
նշանակության փոփոխության մասով,
**գ.** նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ
կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,
ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր
շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.
**3)** համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման
(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող
դեպքերի) թույլտվության համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.
**4)** համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի

վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնութ հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնհինգ հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև երեք հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար մեկ դրամից մինչև երեք հազար ինը հարյուր մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար ինը հարյուր մեկ դրամից մինչև վեց հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար մեկ դրամից մինչև յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև տասներեք հազար հինգ հարյուր մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև երեք հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար մեկ դրամից մինչև երեք հազար ինը հարյուր մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար ինը հարյուր մեկ դրամից մինչև վեց հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար մեկ դրամից մինչև յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև տասներեք հազար հինգ հարյուր մեկ դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ.

**10)** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և
ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման
թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր հինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

**11)** համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և
վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո
աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

**ա.** առևտրի օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուրից մինչև տասնհինգ հազար դրամ,

**բ.** հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուրից մինչև երեսուն հազար դրամ,

**գ.** բաղնիքների (սաունաների) համար՝ վաթսուն հազարից մինչև մեկ հարյուր հիսուն հազար դրամ,

**դ.** խաղատների համար՝ մեկ հարյուր հիսուն հազարից մինչև երեք հարյուր հազար դրամ,

**ե.** շահումով խաղերի համար՝ յոթանասունհինգ հազարից մինչև մեկ հարյուր հիսուն հազար դրամ,

**զ.** վիճակախաղերի համար՝ երեսուն հազարից մինչև քառասունհինգ հազար դրամ.

**12)** համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի
կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում
է՝

**ա.** հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև մեկ հազար հինգ հարյուր մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր մեկ
դրամից մինչև երեք հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար
մեկ դրամից մինչև չորս հազար հինգ հարյուր մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս
հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև վեց հազար մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար
մեկ դրամից մինչև ինը հազար մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինը հազար
մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ.

**բ.** ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև երեք հարյուր մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր մեկ
դրամից մինչև վեց հարյուր մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հարյուր
մեկ դրամից մինչև մեկ հազար երկու հարյուր մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար երկու հարյուր
մեկ դրամից մինչև երկու հազար չորս հարյուր մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար չորս հարյուր
մեկ դրամից մինչև չորս հազար հինգ հարյուր մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր
մեկ դրամից մինչև յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ.

**14)** ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում
արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

**ա.** ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին
գովազդի համար՝ վեց հարյուր դրամ,

**բ.** թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող
արտաքին գովազդի համար՝ ինը հարյուր դրամ,

**գ.** սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

**դ.** այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

**ե.** դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ
տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,
**զ.** եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝
համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10
%-ի չափով.
**15)** Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով
գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների
մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար
դրամ.
**16)** համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝
միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր
մեքենայի համար՝ երեք հազար դրամ.
**17)** համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության
ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
**18)** համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման
թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
**ա.** 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ,
**բ.** 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ,
**գ.** 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն մեկ հարյուր հազար դրամ,
**դ.** 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<04>>-Ի
N 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը կամ փոխհատուցման վճարները՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու թույլտվության ձևակերպման համար՝ վերակառուցվող մասի մեկ քառակուսի մետրի համար նվազագույնը հարյուր դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ վերակառուցվող մասի և (կամ) նոր կառուցվող մեկ քառակուսի մետրի համար նվազագույնը հարյուր դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ վերակառուցված մասի և (կամ) նոր կառուցված մեկ քառակուսի մետրի համար նվազագույնը հարյուր դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և նմանատիպ այլ աշխատանքների համար՝ մեկ քառակուսի մետրի համար նվազագույնը հարյուր դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ մրցույթների և աճուրդների կազմակերպչի կողմից նախնական գնանշման նվազագույնը երկու տոկոսը.

6) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսուն ՀՀ դրամ:

7) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան ՀՀ դրամ.

բ. հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասը ՀՀ դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ չորս ՀՀ դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երկու ՀՀ դրամ.

8) Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 10000 դրամ:

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի համար գանձվող վճար սահմանել 5000 ՀՀ դրամ:

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ մեկ երեխայի ծնողական վճար սահմանել 3000 ՀՀ դրամ , նույն ընտանիքից մեկից ավել երեխայի համար՝ 2000 ՀՀ դրամ:

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար նվազագույնը մեկ հազար դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լուկաշին , Հ. Ավետիսյանի 38 , g.lukashin@mail.ru

<< 04 >> դեկտեմբերի 2019թ. N 08 ՆԻՍՏԻ
Թիվ 42

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օեռնքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով , 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասով, 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի << Լուկաշին համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 44-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի :

2 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ալեքսանյան Ալվարդ | ------------ | ----------- | ------------- |
| Թովմասյան Անդրանիկ | ------------ | ----------- | ------------- |
| Հովհաննիսյան Արամայիս | ------------ | ----------- | ------------- |
| Հովսեփյան Սուրեն | ------------ | ----------- | ------------- |
| Մուրադյան Սուրեն | ------------ | ----------- | ------------- |
| Մեսրոպյան Նորիկ | ------------ | ----------- | ------------- |

*ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Կ.ՄԿՐՏՉՅԱՆ*

2019 թվականի դեկտեմբերի 04–ի, Լուկաշին համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<04>>-Ի
N 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 42 ՈՐՈՇՄԱՆ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր /հողի օտարումից եկամուտներ/ 1 273 300 /մեկ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր /ՀՀ դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկը պակասեցնել 1 104 800 /մեկ միլիոն մեկ հարյուր չորս հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

Ավելացնել՝

1. Բաժին 01 խումբ 1 դաս 1 հոդված 4111-ին 787 800 ՀՀ դրամ,
2. 01/1/1 հոդված 4112-ին 80 000 ՀՀ դրամ,
3. 01/1/1 հոդված 4212-ին 600 000 ՀՀ դրամ:
4. 01/3/3 հոդված 5132-ին 1273 300 ՀՀ դրամ:
5. 01/6/1 հոդված 4213-ին 150 000 ՀՀ դրամ,
6. 01/6/1 հոդված 4657-ին 3 500 000 ՀՀ դրամ,
7. 09/1/1 հոդված 4511-ին 70 000 ՀՀ դրամ,

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

Պակասեցնել՝

1. 01/1/1 հոդված 4213-ից 200 000 ՀՀ դրամ,
2. 01/1/1 հոդված 4215-ից 70 000 ՀՀ դրամ,
3. 01/1/1 հոդված 4221-ից 30 000 ՀՀ դրամ,

4. *01/1/1 հոդված 4233- ից 50 000 ՀՀ դրամ,*
5. *01/1/1 հոդված 4234-ից 152 000 ՀՀ դրամ,*
6. *01/1/1 հոդված 4261-ից 100 000 ՀՀ դրամ,*
7. *01/1/1 հոդված 4267-ից 75 000 ՀՀ դրամ,*
8. *01/1/1 հոդված 4269-ից 146 000 ՀՀ դրամ,*
9. *01/1/1 հոդված 4823-ից 100 000 ՀՀ դրամ,*
10. *01/3/3 հոդված 4232-ից 100 000 ՀՀ դրամ,*
11. *01/3/3 հոդված 4269-ից 300 000 ՀՀ դրամ,*
12. *01/6/1 հոդված 4241-ից 250 000 ՀՀ դրամ,*
13. *01/6/1 հոդված 4819-ից 100 000 ՀՀ դրամ,*
14. *04/5/1 հոդված 4251-ից 1 550 000 ՀՀ դրամ,*
15. *05/1/1 հոդված 4264-ից 100 000 ՀՀ դրամ,*
16. *06/3/1 հոդված 4212-ից 600 000 ՀՀ դրամ,*
17. *06/3/1 հոդված 4269-ից 300 000 ՀՀ դրամ,*
18. *06/4/1 հոդված 4251-ից 119 800 ՀՀ դրամ,*
19. *08/2/7 հոդված 4111-ից 467 800 ՀՀ դրամ,*
20. *08/2/7 հոդված 4112-ից 80 000 ՀՀ դրամ,*
21. *08/2/7 հոդված 4251-ից 120 000 ՀՀ դրամ,*
22. *08/2/7 հոդված 4241-ից 60 000 ՀՀ դրամ,*
23. *08/3/1 հոդված 4234-ից 150 000 ՀՀ դրամ,*
24. *09/3/2 հոդված 4729-ից 250 000 ՀՀ դրամ,*
25. *09/4/1 հոդված 4729-ից 250 000 ՀՀ դրամ,*
26. *10/7/1 հոդված 4729-ից 572 000 ՀՀ դրամ,*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ. Տ.